Համագործակցության հուշագիր

26.03.2013 08:51

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը համագործակցություն է հաստատել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի հետ: Համագործակցության շրջանակներում, ի թիվս այլնի, հնարավորություն է ընձեռնված փաստաբաններին' ներկայացնելու իրավագիտության ոլորտին վերաբերվող գիտագործնական հոդվածներ, որոնք կհրատարակվեն ինստիտուտի կողմից հրատարակվող հանդեսում, որն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի դոկտորական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Կարևորելով փաստաբանության դերը իրավապաշտպան գործունեության զարգացման գործում՝ անհրաժեշտ և նպատակահարմար է պալատի անդամների ակտիվ մասնակցությունը, որն իր հերթին կնպաստի իրավագիտության և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ գիտագործնական հետազոտությունների զարգացմանը:

Մանրամասների համար կարող եք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ 54 71 29 (115) հեռախոսահամարով իսկ նյութերը ուղարկել info@advocates.am էլ. հասցեով:

Վերը հիշատակված հուշագրի շրջանակում ներկայացվող հոդվածները պետք է համատասխանեն որոշակի պահանջներին: Տես՝ այստեղ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })